



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
23 հունվարի 2018 թվականի N 7-Ա


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ «ԱՆՊԱՐՏ ՀԱՅ ԶԻՆՎՈՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի «բ» և 1.19 կետի «ա» ենթակետերի դրույթներով, համաձայն «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումների՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում «Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) դրամ, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել «Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, աշխատակարգը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5-րդ հավելվածների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ




Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ
«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման

- 1. Մ.Գասպարյան ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական /նախագահ/
- 2. Ս.Դավթյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ
- 3. Մ.Գանդալյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար
- 4. Ս.Դավթյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
- 5. Թ.Կարապետյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
- 6. Վ. Արզումանյան «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար




Ռ. Սարգսյան

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման

Միջոցառման սկիզբը՝ 2018թ. հունվարի 27- ժամը 11-30-ին

1. Ծաղկեղրում և հարգանքի տուրք Արցախյան պատերազմում զոհվածների հուշակոթողին
2. Սուրբ պատարագ և մոմավառություն Կապանի եկեղեցում
3. Բանակի տոնի կապակցությամբ մարզպետի հանդիպում Կապանում և Սիսիանում տեղակայված N զորամասերում
4. Համերգային ծրագիր պարային համույթների և անհատ կատարողների կողմից
5. Հանրային սննդի կազմակերպում

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար



Ռ. Սարգսյան

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման

Միջոցառման նպատակը

Միջոցառման նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետության անկախ պետականության, կայացած ու անպարտ բանակի ակունքները, 26-ամյա ընթացքը, հզոր ու կայացած կառույցի անխախտելի լինելը, հայրենիքի համար իր կյանքը նվիրաբերող հայ երիտասարդի՝ 18-ամյա զինվորի անկուտրում կամքի վառ դրսևորման գաղափարը:

Միջոցառման թիրախ խումբ է հանդիսանում մարզի երիտասարդությունը: Այն երիտասարդության շրջանում խթան կհանդիսանա ազգային ոգու բարձրացման, հայրենասիրական դաստիարակության ամրապնդման, հայրենիքի նկատմամբ հավատի ու վստահության դրսևորմանը:

Քաղաքային եկեղեցիներում կատարել հոգեհանգստի և խնկարկության արարողություններ:

Միջոցառման ընթացքում կինչեն ժողովրդական ու ազգագրական, հայրենասիրական երգեր, ելույթներով հանդես կգան պարի խմբեր՝ ազգային պարերի կատարումներով:

Հոգևոր առաջնորդների կողմից կլինի օրվա խորհրդի ներկայացումը և միջոցառման օրհնությունը:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը

«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Միջոցառման մասնակիցները

«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման մասնակցում են Սյունիքի մարզի երիտասարդությունը, արվեստի բնագավառի շնորհալի ստեղծագործողներ, մարզի տարածաշրջաններից հրավիրված երաժշտական և պարի խմբեր, անհատ կատարողներ, դպրոցականներ:

Միջոցառման ժամկետը և վայրը


Միջոցառումներն անց են կացվելու 2018թ. հունվարի 27-ին, մարզի համայնքներում, մարզում տեղակայված N զորամասերում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

Միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմակերպական կոմիտեի կազմի հետ:

Միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը հոգում է «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար




Ռ. Սարգսյան

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ. հունվարի 23-ի
N 7- Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Անպարտ հայ զինվոր» խորագրով հիշատակի եվ մեծարման միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Հանրային սննդի ծառայություն	4240.00	605.0
2	Նվերներ	4237.12	295.0
	Ընդամենը		900.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար



Ռ. Սարգսյան

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
 «Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման վայրը
1	Մասնակիցների հավաք	27 հունվար 2018թ Ժ.8 ³⁰ -9 ⁰⁰	Կապանի Գ.Նժդեհի հրապարակ
2	Ծաղկեղրում և հարգանքի տուրք Արցախյան պատերազմում զոհվածների հուշարձանին	27 հունվար 2018թ Ժ.11 ³⁰ -11 ⁴⁵	Ք.Կապան
3	Մեկնում Կապանում և Սիսիանում տեղակայված N զորամասեր	27 հունվար 2018թ Ժ.11 ⁴⁵ - 13 ⁰⁰	N զորամաս
4	Մասնակիցների հանդիպում N զորամասի զինծառայողների հետ:	27 հունվար 2018թ Ժ.13 ⁰⁰ -13 ²⁰	N զորամաս
5	Համերգային ծրագիր	27 հունվար 2018թ Ժ.13 ³⁰ -14 ⁴⁵	N զորամաս
8	Միջոցառման մասնակիցների վերադարձ	27 հունվար 2018թ Ժ.16 ⁰⁰ -19 ⁰⁰	
9	Հանրային սննդի կազմակերպում	27 հունվար 2018թ	Կապան

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
 աշխատակազմի ղեկավար



Ռ. Սարգսյան